

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

« 29 » հունվարի 2020թ.

N 4/14

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի նկարագրությունը, վարչական ակտն րնդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության աշխատակից Ա. Բաբայանի կողմից 13.12.2019 թվականին հայտնաբերվել է Հայաստանի Հանրապետության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 157.15-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտում, մասնավորապես՝ կառուցապատող Անդրանիկ Վարդանյանի կողմից «Ձոր 2» թաղամաս, հ. 60 հասցեում բնակելի տան կառուցման համար նախատեսված շինարարական հրապարակը պատշաճ, մասնավորապես՝ սահմանազատող ցանկապատը կազմակերպված չէ և բացակայում է իրազեկող ցուցանակը, որի վերաբերյալ 16.12.2019 թվականին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 032583 արձանագրությունը (այսուհետ՝ արձանագրություն):

Որպես իրավախախտման փաստը հաստատող ապացույց, իրավախախտման հայտնաբերման պահին լուսանկարվել է իրավախախտման վայրը:

Հայտնաբերված իրավախախտման փաստով Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ հարուցվել է վարչական վարույթ:

Կառուցապատող Անդրանիկ Վարդանյանը (անձնագիր USA 498173207, տրված 13.02.2013 թվականին) բացատրություն տվեց այն մասին, որ ընդունում է իրավախախտումը: Թերությունները շտկվել են:

Գործի քննության ընթացքում ուսումնասիրվեցին արձանագրությունը, 04.11.2019 թվականի հ.29/01-Վ2408 շինարարության թույլտվությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետի 24.01.2020 թվականի հ. 51/44-125760 գրությունը, շինարարական հրապարակի կազմակերպման սխեման և իրավախախտման լուսանկարը:

Գործի փաստական հանգամանքների և դրանում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում հիմնավորվեց, որ կառուցապատող Անդրանիկ Վարդանյանի կողմից «Ձոր 2» թաղամաս, հ. 60 հասցեում բնակելի տան կառուցման համար նախատեսված շինարարական հրապարակը սահմանազատող ժամանակավոր ցանկապատը կազմակերպված չէ և բացակայում է շինարարական աշխատանքներին վերավերող տեղեկատվական ցուցանակը, որով թույլ է տվել Օրենսգրքի 157.15-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտում:

2. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Սույն օրենսգրքով նախատեսված իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն առաջանում է, եթե այդ խախտումները իրենց բնույթով քրեական պատասխանատվություն չեն առաջացնում գործող օրենսդրությանը համապատասխան:

Օրենսգրքի 157.15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կառուցապատվող օբյեկտներում շինարարական հրապարակների տարանջատման ու սանիտարական վիճակի ապահովման պայմանները չպահպանելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենսգրքի 23-րդ հոդվածի 2-րդ կետով, 157.15-րդ հոդվածի 3-րդ մասով, 219.1-րդ, 281-րդ և 282-րդ հոդվածներով, Երևանի քաղաքապետի 23.08.2013 թվականի թիվ 4180-Ս որոշմամբ (փոփոխ. 08.07.2015 թվականի թիվ 2104-Ս, 01.08.2017 թվականի թիվ 2645-Ս, 12.07.2018 թվականի թիվ 2516-Ս)՝

### ՈՐՈՇԵՑԻ

1. Կառուցապատող Անդրանիկ Վարդանյանին Օրենսգրքի 157.15-րդ հոդվածի 3-րդ մասով ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակելով վարչական տույժ 70.000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամի չափով:
2. Օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը իրավախախտում կատարած անձի կողմից ստանալուց ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ կենտրոնական գանձապետարանի N 900015211239 հաշվին:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական և դատական կարգով՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԱՐՉԱԿԱՆ  
ԻՐԱՎԱԽԱՎՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻ  
ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ՝



ՎԱՂԻՆԱԿ ԱՆԱՆՅԱՆ